

Դ.

ԵՐԳԵՐ

— ԷՄ Զ —

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳԵՐ

Կարձկամայ նամրկամց գիւղի բարբառով *).

Հայ Լուրիկ, Լուրիկ, Լուրիկ, Լուրիկ.
 Բաղչէմ եմ դրեր յառջեւ ճրագին,
 Թուխ ու հան յէլեր՝ հով էրեր վըր քաճուր վարդին.
 Էրթամ ու ահ տամ կանուխն էվարին.
 Լուրիկ, Լուրիկ, Լուրիկ, հայ Լուրիկ.
 Ա՛յ դիպար, էրեկ քու ապով ընձկում ձիկ էն ծեծած,
 Էրթամ Հալապու շաքար պիրեմ, քու պընքտերն էր քաւած,
 Լուրիկ, Լուրիկ, Լուրիկ, հայ Լուրիկ.
 Այ անուշ խոտ, էսօր իմ աչք առաւ քու էրես.
 Իմ խալով քեանուր վարդն էր վըր քզի շաժաց,
 Լուրիկ, Լուրիկ, Լին:

*) Ասած է Արմաղան Մարտիրոսեան. Իսկապէս օրօրոցի յատուկ
 երգերը շատ քիչ են. մայրը երեսակայելով զաւակին ապագան, ինքնաբե-
 րաբար ըստ իւր ցանկութեան նախադասութիւններ կը յօրինէ ու կերգէ
 այլ եւ այլ եղանակներով. որ երկու տեսակ են. աւելի երկար նախա-
 զասութիւններով կերգէ օրօրոցի մէջ եւ կարճ կերգէ երբ ծնւոց մէջ
 վեր - վեր կը թռնէ:

Այ մարդ, դիւ ներքուց իր գեամ, խըտ կէնէր գանգատ,
Ձեռ մէկ բռնիր էր ուէհան, մէկն էր քանուր վարդ
Լուրիկ, լուրիկ, լուրիկ, հայ լուրիկ:

* *

Որդի քնի քեօ քուն անուշ 1)
Վերին քե ծիծ տայ, Աստուած քե պահի,
Գեամին քե տանի, բերի,
Զուր քու մէրիկ դառնայ, գիտայ:

* *

Մոկաց Սեպ գիւղի բարբառով *)

Քսկնամ տ'էնիմ օրօր, օրօր,
Իմ գրկանոցին օրօր տ'էնիմ.
Իմ պստի ջարիկ տ'քնացուցեմ,
Իմ ջեօջ ջարիկ աը փախցուցեմ:
Ալայ օգեր. քեալայ պօգեր,
Իմ պստի ջարիկն եմ քնացուցեր.
Ասու կրակ թափի վէր իմ կէսեր
Ճրագն ընցուց վեր իմ ջնէլին,
Իմ ջնէլ մըանջ ծովին խեղդեցին:

Թաւրիգի բարբառով.

Նաննի, նաննի, օրօր բալիս, նաննի
Իմ Վարդուհին քուն ունի,
Նաննի, նաննի, օրօր բալիս,
նաննի 2).
Էրծաթած տուն տուն ունի,
Մովիցը ծածկոց ունի,
Ոսկուցը սփռոց ունի:
Նաննի ասեմ, քունդ տանի
Գու դոււմանիդ լեզուն կապուի:

* *

Ռայբուրդի բարբառով.

Վերի քամին զարնէ քեզ օրօրցնէ,
Վարի քամի զարնէ չորերդ չորցնէ,
Դչխուն Հեղին աման քեզի ծծցնէ:
Նըանիկ ըսեմ քնանաս,
Վարդի ջրով լողանաս,
Շատ պզտիկ ես մեծանաս:

4) Մի գիւղացի հարսի՝ հօր տունը դարձ են տանում. հարսը հօր տունը մի ամիս մնալուց յետոյ, սկեսրայրը զալիս է եւ վերադարձնում. ճանապարհին հարսի երկունքը սկստում է, նա սկեսրայրին հասկացնում է թէ՛ իբր ծարաւ է, ուզում է ջուր խմել, իջնում է ծիւց եւ մի քարի տակ ծնում է երեխային, փաթաթում, թողնում այն տեղ, ճանապարհը շանունակում, տուն հասնում եւ վերոյիշեալ երգը ամեն անգամ կրկնում է: Մի տարի յետոյ, երբ նորից վերադառնում է հօր տունը, երեխային ողջ եւ մեծացած է գտնում: Այդ դէպքը որ լսում սկեսուրը համբուրում է հարսի երեսները, որ մայրական սիրտը զոհել է ա. արինուծեան համար:

*) Ասած է կոյր Մանիշակ Մելքոնեան:

2) Ամեն տողի վերջը կրկնելու է «նանի բալէս նանի» եւլն:

Խոյեցւոց բարբառով Հայրազ գիւղի երգերէն *).

Պտնիկ¹⁾ ասէմ քիւնդ տանի,
 Չար կամարա ճիւրտ տանի.
 Նտնիկ նտնիկ բալա ջան,
 Իմ թև թիկունք Կալօ ջան.
 Լանդիկ էմ կապի ծառի ճողերէն,
 Քամին թօ փչի սարի խովերէն,
 Նտնիկ ասէմ տիւ քնէս,
 Ծասկիւր էմ քեզի որ քռհնէս,
 Քնի որ շոտ ճոշանաս,
 Չարը պորին խասկընաս,
 Ճամպլէմ էթոս խերանցաս,
 Պորի խորբոր խասկնաս,
 Ազգ, էրամիդ իմաս տաս:
 Օրօր բալաս նտնիկ տնի,
 Չար կամարա ճիւրտ տանի ելն,
 Քեօ մօր կաթա հալալ ի,
 Կէ, կշտացի նոր քնի,
 Հովբո՞ք խօ մէ օր կասէս—
 Էտ իմ կաթնըտու մէրն ի:

Օրօրոցի մասնիկներէ գովեր.

Իմ բալային քիւն իւնի 2),
 Արծթէ դրփլ իւնի,
 Ոսկիէ պոլիս իւնի,
 Սողոմէ կամար իւնի,
 Ինդեօզէ լիւլիկ իւնի,
 Վսկոռէ օրօրան իւնի,
 Չորխով քեռշուկ ճաղերն ի,

Շիրմանի էլ լուծ իւնի.
 Արփշումէ խութիւռ իւնի,
 Տակա պիւրթ խողլո ի,
 Փիտուռէ պորցէր իւնի,
 Ալ դանաւուզ լրխէփ իւնի,
 Իւլգիւղի չիթ շորէրն ի,
 Ալ մոհմուռով բոնդերն ի,
 Սեքնդիւր ճոճի շօրն ի,
 Քնի պորով ճեօշանաս,
 Խօրն-մօրդ տմոգո իմանաս.
 Օրօր բալաս նտնիկ տնի,
 Չար կամարա ճիւրտ տանի:

* *

Թիմարայ Կիւսնեց գիւղի բար-
 բառով 3).

Սիփանայ սարի տակ, մառմառ
 քարի տակ,
 Քե դնեմ վուսկի օրօրօց, բալիկ
 ջան,
 Վրեդ քեաշեմ առծթէ ծածկոց.
 Վերին քե ծիծ տայ, ուրուր, ու-
 րուր.

Լուսին քե պախապան կայնի,
 Արեգակ քե ծծղացուցի.
 Իմ աղբօր տղէն տան տղէն
 Քրօջ տղէն շան տղէն:

* *

*) Առնուած է Շնիտս ու Կաց Խոյեցւոց Դրաշար Յարուծիւն Աւստանի անտիպ ուսումնասիրութենէն:

1) Դիւիվայր դարձած ա-երը արաբական չ տառի հնչումն ունեն:

2) Հիւ-ը Խոյեցւոց բարբառի մէջ ֆրանսերէն ս տառի հնչումն ունի օր. «տս—սիւ—դու» «սնի—իւնի—ունի» «սր—իւր—իւր». սակայն այսպիսի դէպքերու իւր-ը մնում է պարզ գրականական հնչմամբ, որ բացառութիւն է կազմում միայն տեղը որոշելում. օր. «իւրի ի հրովի, իւր պիւրեց», «սիւ իւր ես հրովի», եւլն բառերը:

դ. Յ. Ա.

5) Ասած է Խոռօ Սարգսեան:

Երեխան խաղցնելու ժամանակ
Խայեցուց բարբառով *).

Մէ լաճ իւնէմ օղէրով,
Խարս կը պէրէմ քօղէրով,
Նոնոն կը լո խնկերով,
Բարան կը լո լինջերով:
Հա դոն դոնի դոնդոնի,
Կապան կարէմ շոնդոնի,
Քեօբոն տնէմ պոց մաւի,
Նոնոն Գեօ չարա տանի:
Հա դոն դոնի դոն չիւնէնք,
Թիւրքերի խէտո պոն չիւնէնք,
Թիւրքն իկեղիւն քարով տանք,
Խայն իկեղիւն պոքով տանք:
Տղա, տղա, ոսկէ ջղայ.
Առ քեօ ճանէր, քէլի խաղայ՝
Ղլիւրո մաղէմ, կեամ քէ պախէմ:

Օխի դոնի, դոն, դոն,
Ասկիէն դինդոն,
Իմ դուռկին վիւրո տամ,
Թաքաւորի լաճուն տամ:
Տոշ, տոշ, փնդղի տոշ,
Նոնոյի աղչիկ տոճրկան,
Թթեքո կշտի ոնի պոն,
Խայ շլիկի տանի կիւտոն,
Տընդ, տընդ տընդ աչօ ջան:
Ախչիկ, ախչիկ, քարէ չիւնիկ,
Ա՛ռ քեօ խրժիկ քէլի խաղա,
Ղլիւրո մաղէմ, կեամ քէ թաղէմ:

Հա տընդ տնգի տնգոցն ի,
Նոնոյի մերդի քըթոցն ի,

Պոնն ինչ տնէմ, տիգոտ ի,
Պոմբոկեո չոր կոտո ի,
Աւէլի ծերին ծաղիք ի,
Խաւու ոտին թաղիք ի,
Դմբան պէրէք որ թիւնք,
Մամոն սկի որ ծամենք,
Տնիստ տըտիկ տնէնք,
Էդ տղային 1) քամաւա տնէնք:

Հա տընդ տընդ, տընդ փաշայ,
Նոնոն քէ դոմուաւ ի,
Աւիօն քեօ ջլաւ քեռշ ի:
Հա լա լայ, լալկներով,
Ճաշ էփէմ պոռկքերով,
Էդ տղան ուտի ճոճերով:
Հա դընդի դնգի դընգան,
Նոնոյի բալա սկուտան,
Քեռին էկաւ պեռկեո,
Սե պոռկա չլոկեո,
Պոռկա ինգեաւ կոտովաւ,
Սկուտիկեո կոտովաւ:

Երեխան քնից հանելիս երբ օսկը
քայց է արել.—

Քնիր էս, քոհնիր էս Նոնոն քէ
դուրբան,
Քեռքիր էս, մաւորիր էս, կըճղա
քէ տանի:

Կարձկանայ Նաճկանց գիւղի
բարբառով **)

Քե միւռնեմ կճատ մեղու 2),
Քեօ կճատ թիւեր վերու,
Սարէ սար կայ էրթեալու,
Շուշան ծաղիկ կայ քաղելու,
Թառ քաւորին յողորկելու:

*) Առնուած է Յ. Ա.-ի «Նիսոս ու Կաց Խոյ» անախ պ ուսումն.

1) Խոյցիք երկու սեռերին եւս «տղա» են ասում.

**) Ասած է Արմաղան Մարտիրոսեան.

2) Տղայ զաւակին թոցնելու ժամանակ կասեն.

Էրնէկ յէն օր՝ ինչ գիւ էղար,
 Յէն օր վարդէր ու վարդէվար՝
 Աւագ զատիկ՝ ճրագն էր վառ.
 Շուն ի գիւս օխւր կտէր,
 Կեաքաւ էրդիս՝ մօրն աւետիս:

* *

Յըն գիւ, արև քեօ խէր,
 Արևու ջեռջ խօրողրէր.
 Սթլիկ, Շողիկ քեօ խօրքրներ,
 Թուխ աչք քեօ մօրքրներ,
 Սա քե մեռնեմ մամու դամ,
 Ամաւն օրերն ես էղեր,
 Խաչկայ թփեր գարնցան
 Պոտոն էկեր աշնցան:

* *

Բաղէօի բարբառով *).

Պէ թռի, թռի, թռչունեկ,
 Սղեկեցի՛ եղուրնեկ.
 Խաչ պատուխան կուտ ուտես,
 Աւագանի ջուր խմես:
 Բող բող ձիանք խեծուցեմ,
 Խով խով տեղրանք քնցուցեմ,
 Սիւտակ խացեր կերցուցեմ,
 Կարմիր գինին խմցուցեմ:

* *

Մակաց Սեպ գիւղի բարբառով **)

Աղջիկ, աղջիկ, ոգրի աղջիկ,
 Աղջեկ, աղջիկ, գընգրի աղջիկ.
 Էլեր սարեր կը սըղսըղայ.
 Մատնիք մատքեր կը պսպղայ.
 Թռի, թռի, թռուցեմ.
 Սև խաւեր կերուցեմ,
 Արաղ գինին խմացուցեմ:

Թիմարայ Կիւսմեց գիւղի բար-
 բառով.

Սա քե մեռնիմ գեօլի բադ,
 Գեօլից իւար, նստար ափ:
 Սա քե մեռնեմ գեօլի կագ,
 Սա քե մեռնեմ խորոտ մագ:
 Սա քե մեռնեմ, որ տիւ կաս,
 Նըա՛ խիւնտնաս, նըա՛ տքաս.
 Ըխթատեղրանք էրենաս,
 Խառնաստեղրանք տռտնկաս.
 Հալալա հալկնեռով՝
 Պաս կիփեմ պուտկնեռով.
 Խէրքիւրն էկաւ, համ կտելով՝
 համ շերիփով:

Գրողի մախ Միւքոն տանի,
 Թէ ես ասի մուկն սպանի.
 Մուկն ինկե կարաս խարամ ի.
 Ով հալհալա, հալհալա:

* *

Թաւրիգի բարբառով.

Թռի, թռի, թռցնեմ,
 Ծառի տակը քնցնեմ,
 Պաղ պաղ ջուրը խմցնեմ:
 Աղջիկ ունենք համանի,
 Զենք տայ խազար քումմանի.
 Օխտը ձի, օխտը ջոբի,
 Ով կը բերի, կը տանի,
 Ով չի բերի, կա կանի:

Վարդուհի խանում դուն էլնիս,
 Թըախտ էրևան քուն էլնիս,
 Նըա՛ բախփ անես, նըա՛ չայի,
 Բալա, փուշդ խաթայի:

* *

*) Ասած է Ալթուն Ասողաճատուրեան որ բնակած է Արճէշ-
 Բաղէշ եւ Վաղարշապատ:

**) Ասած է կոյր Մանիշակ Մեքոնեան:

Ալաօկեքոսի բարբառով. *)

Հա թռի թռի թռցնեմ,
Սե հաւի միս կերցնեմ.
Կարմիր բուրուջ հագցնեմ.
Ծառի տակը քնցնեմ:
Քեռին էկաւ բեռներով,
Բեռներ յըմէն փառապար,
Դրկոն վրէն սաբուպար:
Սաման, եաման ես քեզի դաման,
Քու ծծեր հաղորդ աման.
Քու բերան խնկի աման:
Արի էրթանք սարի սեյրան,
Քաղենք դառսա մանիշակ.
Բերենք, թախենք ետրդան դոսակ,
Դու մէջ քնես, էդնիս գարնան
օրօակ:

Ա պզան մեղու, ա պզան մեղու,
Քու մանրիկ թեք վերու,
Բանձրիկ սարերն էս էրթալու,
Սուսան, սուսբուլ ես քաղելու,
Քաղցրիկ մեղրն ես կրելու:

Հա թռի թռի թռցնեմ,
Սե հաւու միս կերցնեմ,
Հով ծառի տակ քնցնեմ.
Հա թռի թռի չուր ի լուս,
Պապէն գիգայ կէնայ դուս:

Հա կհատ մեղու, հա կհատ մեղու,
Քափ տու քու կհատ թեքրուն.
Սարէ սար էս էրթուլ,
Շուշան ծաղիկ էս բերելու:
Քառ ես դու, թառ քու քաւոր,
Սօթ էրեց քզի կնքեր ա,
Սօթ սարկաւագ մօմեր բռներ ա,
Կը աւտնամ քու ստեղծողին,

Քզի չալկե, տուն բերեր ա,
Չթորկեր ա, կատուն կերեր ա:

••

Գացինք Քօլի գեղ 1)
Բերինք տիկ մի եղ,
Էրինք ձուաձեղ,
Կերանք միատեղ:
Տարանք հովքովուն,
Առնէնք կաթ մածուն.
Կըթոց գըլորաւ,
Հովիւ խըռովաւ,
Օխար մօլըրաւ,
Բէրուոր շիւարաւ:

••

Քալայ (զալար) թաթիկ շուր բեր.
Սո չքերիմ դու բեր.
Փլաւ էփիմ դու կեր.
Սո չուտեմ դու կեր:

—

Աղբէր, աղբէր ես քու շուն
Ինչ ես բարձե քու իշուն
Խունկն ու հինէն ապրշում,
—Դո՛ր կը տանես—գզեղին,
—Դեզ յետե սարերուն,
Արջկան կը մանայ սրբերուն,
Ճախրակ կը մանայ արջերուն,
Բուճ կը գործայ թաթերուն:

* * *

*) Ասած է Արշալոյս Աւետիսեան.

1) Մշեցիք. Պոլանխցիք. «Էրթանք Ստամբուլ, բերինք փարա բօլ»
կերպեն. իսկ Ալաշկերտցին պանդխտութիւն չեն սիրեր. որով չունի եւս նոյն
գրկու տողը:

Աղջի լանէ,
 Քարման մանէ,
 Օր կը մանես՝ բարակ մանէ.
 Թուխ օլվար ընճալրի բան ա.
 Վիզ ու վզնոց հարսի բան ա.
 Դեղին օսկին ճակտի բան ա.
 Դեռ ու դեղտիր ետեջ բան ա.
 Ներկուկ քօղոզ ջնելի բան ա.
 Կարմիր դալմէն աղի բան ա:

Կարկաշայ, կարի լաշայ (կարենայ չէ).
 Սև եզան սև սամե թեռ,
 Կարմիր եզան օղն ու կոճակ.
 Որ չտայ իմ կարկաշին,
 Կերթամ կըսեմ պօլառ իրիցուն.
 Յիգայ թատայ ձեր ձցում:

*

Կարմեցուց բաբրառով.

Տան, տան ու տան հորթի Մինաս,
 Մարըդ պառկէ բերէ Թոմաս,
 Աղա, փառա հարդ ըլինաս,
 Խանում, Խաթուն մարըդ ըլինաս.
 Խաս տանտիկին մօրքուրդ ըլինաս,
 Տոռուք քէրող հօրքուրդ չլինաս:

**

Երեւկայ Ղուզլու գիւղի բաբրառով *)

Թռի, թռի թռցնեմ,
 Արաղ գինին խմցնեմ,
 Պատի տակը քնցնեմ.
 Պատը վրէժ բլցնեմ.
 Սև հաւի միս կերցնեմ
 Մեզի մէ կոկոլ հաւ կայ,
 Փողցէ փողոց ժուռ կուգայ,
 Զարկին ոտը կոտրեցին.
 Դրին պուտուկն, էփեցին,
 ձփերն էկան, թէպէցին:

*) Ասած է Հայաստան Կարագետեան.

Անքիւ քեանքիւ իմ Արօն,
 Դաստա քեանքիւ իմ Արօն,
 Սարեր շուռ դայ իմ Արօն,
 Բարով տուն դայ իմ Արօն:
 Մալաքա ձորն ամպելա,
 Արօն ձինը թամբերա,
 Անձրև էկէ՝ թռչեր ա.
 Արև դարկէ չորցեր ա:

* *

Բայրուրդի բարբառով.

Մանչա կայնե կարմնճին,
 Մանգիւս օղերն անկճին,
 Խապար տարէք զոքնչին,
 Մատաղ կտրէ էսպէս կտրճին:

Տան, տան ու տան, տուն չունենաս,
 Քրդին օբան բան չունենաս,
 Տան, տան ու տան, ճանապի վար,
 Բիւ քիւչիւկ ճանապի վար,
 Իւմազ բաշի, դոխմազ սաչի,
 Եւմուի, իւմուի գեանապի վար:

* *

Ակնայ բարբառով *).

Օրօր, օրօր իմ որդիս,
 Քունը տանի սիրականիս,
 Քուն չունիս, արթուն կը կենաս,
 Ո՛չ ցերեկը քուն ունիս,
 Ոչ ցերեկուան ինչուան իրկուն:
 Քնանաս ու մեծանաս,
 Հազար բարու տիրանաս:
 Օրօր, օրօր, քուն ունիս,
 Բէշիկտաշը տուն ունիս,
 Մարգրտէ հօղան ունիս,
 Զաւանիրէն բարձ ունիս:
 Էկուր քեզ բաղջան տանեմ,

*) Ասած է Մարիցա Մաքսուտեան, որ բնիկ Ակնցի եւ տասերկու տարի է, Պօլիս բնակած է. գիտէ շատ երգեր եւ կերպէ բաղջր եղանակով:

Ծառէ ի ծառ կապեմ կախ ուրան:
 Հովնուկն անուշ քունդ անուշ
 Կարմիր վարդերն է բացուեր,
 Վարդերուն հոտն ալ անուշ.
 Քնացիր սիրուն որդիս,
 Քու քունդ ալ ըլի անուշ:
 Ա՛յ էնեմ որ քնանաս,
 Պզտիկ ես մեծանաս.
 Մեծանաս ու մեծ մը ըլիս,
 Բալբիս, գեղ մը ըլիս:
 Քներես. քնկրեր ես,
 Ծածկերեմ քրտներես.
 Գամ շալդ դան տանեմ
 Վարդի նման բացուեր ես.
 Վարդերը սիրուն հոտն անուշ.
 Սիրականիս քունն տնուշ:
 Քնացիր որդիս, ու մեծ մը ըլիս,
 Դուն առ քաղթին վրայ խօսաց տէր ու իշխան ըլիս:
 Օրօր օրօր, դուն մեծնաս հօրով
 Սնանիս մօրով,
 Դեմ ուրան կանչեմ օրօր.
 Քաղցր կաթնով տի կշտացնեմ
 Բաղկիս վրայ տի մեծցնեմ:

